

Նոր Կորագիր (ԿՐԿԱՁԱՏԻԿ)

30 ՄԱՐՏ 2008

Կիրակնօրեայ ընթերցումներ	էջ 1-2
Շարական նոր Կիրակիի	էջ 2
Բացատրութիւն նոր Կիրակիի	էջ 2-3
Շարքուայ ժամանակացոյց	էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ  
 «ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ»  
 ԳԻՐՔԷՆ  
 (5.34-6.7)

Այն ատեն ատեանին մէջ ոտքի ելաւ Գամաղիէլ անունով մէկը, որ փարիսեցիներէն էր եւ ամբողջ ժողովուրդին կողմէ յարգուած օրէնքի ուսուցիչ մը, հրամայեց որ նախ առաքեալները դուրս տանին, եւ ապա ժողովականներուն ըսաւ.

«Ո՛վ իսրայէլացիներ, լաւ մտածեցէք եւ ա՛պա որոշում առէք այս մարդոց մասին: Կը յիշէք թէ ժամանակ մը առաջ Թեւեղաս անունով մէկը ելաւ, որ ինքզինքը երեւելի մէկը կը յայտարարէր, եւ շուրջ չորս հարիւր հոգիներ իրեն միացան. բայց ինք սպաննուեցաւ եւ բոլոր իրեն միաբանածները քայքայուեցան ու ցրուեցան: Իրմէ ետք Գալիլիացի Յուզա մը ելաւ մարդահամարի օրերուն եւ բազմաթիւ ժողովուրդ ապստամբութեան մղեց իրեն հետ. սակայն ան ալ կորսուեցաւ, եւ բոլոր անոնք որ իրեն յարած էին՝ ցրուեցան: Գալով ասոնց, կ'ըսեմ ձեզի. այս մարդոցմէ ձեռք քաշեցէք եւ ձգեցէք զիրենք: Որովհետեւ, եթէ ասոնց խորհուրդն ու գործը մարդոցմէ է՝ պիտի խափանուի. իսկ եթէ Աստուծմէ է՝ չէք կրնար խափանել, եւ թերեւս այդ ձեռով Աստուծոյ դէմ պայքարած ըլլաք»:

Ժողովականները հաւանեցան Գամաղիէլի խօսքերուն, եւ առաքեալները կանչել տալով՝ ձեռնա տուին. ապա պատուիրելով որ ա՛լ Յիսուսի անունով չխօսին, արձակեցին զանոնք: Իսկ առաքեալները ատեանէն հեռացան, ուրախանալով որ Տիրոջ անունին համար անարգանքի արժանացան: Ամէն օր, թէ՛ տաճարին եւ թէ՛ իրենց տուններուն մէջ, անդադար կը սորվեցնէին՝ Յիսուս Քրիստոսը քարոզելով:

Ժամանակ մը ետք, երբ Յիսուսի հետեւորդները շատցան, յունախօս հրեաները սկսան տրտնջալ երբայախօս հրեաներուն դէմ, որովհետեւ ամենօրեայ նպաստի բաշխումին մէջ իրենց այրիները կ'անտեսուէին: Այն ատեն, տասներկու առաքեալները կանչեցին բոլոր հաւատացեալները եւ ըսին.

«Մենք չենք ուզեր Աստուծոյ խօսքին քարոզութիւնը ձգել եւ ուտելիք մատակարարելով

զբաղիլ: Հետեւաբար, եղբայրներ, ձեր կողմէ վկայուած եօթը հոգիներ ընտրեցէք, որոնք Սուրբ Հոգիով եւ իմաստութեամբ լեցուն ըլլան. զանոնք այս անհրաժեշտ գործին համար կարգենք, իսկ մենք աղօթքի եւ Աստուծոյ խօսքին մատակարարման նուիրուինք»:

Հաւատացեալներ ուղիղ գտան առաջարկը եւ հետեւեալները ընտրեցին.՝ Ստեփանոսը, որ հաւատքով եւ Սուրբ Հոգիով լեցուն մարդ մըն էր, Փիլիպպոսը, Պրոքորոնը, Նիկանորը, Տիմոնը, Պարմենասը եւ Նիկողայոսը որ հրէութեան դարձած անտիոքացի մըն էր: Ապա զանոնք բերին առաքեալներուն առջեւ, որոնք աղօթեցին եւ իրենց ձեռքը դրին անոնց վրայ:

Ահա այսպէս Աստուծոյ խօսքը կը տարածուէր եւ Երուսաղէմի մէջ հաւատացեալներու թիւը մեծապէս կը շատնար: Նոյնիսկ քահանաներէն շատեր հաւատքը կ'ընդունէին:

ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԱԿՈՒՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
 ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԷՆ  
 (3.1-12)

Եղբայրներս, ամէնքդ ալ ուրիշները սրբագրելու հետամուտ մի՛ ըլլաք, գիտնալով որ մենք՝ ուսուցանողներս աւելի խստութեամբ պիտի դատուինք, որովհետեւ բոլորս ալ յանցանքներ ունինք:

Ան որ գիտէ իր խօսքերը կշռել՝ կատարեալ մարդ է, ինքզինքին իշխելու կարող: Տե՛ս թէ ինչպէս ձիերուն բերանը սանձ կը դնենք որպէսզի մեզի ենթարկուին, եւ անով ձիուն բոլոր շարժումները կը կառավարենք: Կամ դիտէ նաւերը. ո՛րքան ալ մեծ ըլլան եւ ի՛նչպիսի գօրաւոր հովերէ ալ քշուին, փոքրիկ ղեկ մը զիրենք կ'ուղղէ դէպի հոն ուր նաւավարը կը փափաքի տանիլ: Նոյնպէս ալ լեզուն. թէեւ փոքր անդամ մըն է, բայց մեծամեծ բաներով կը պարծենայ: Գիտէք թէ պատիկ կայծը հսկայ անտառ մը կրնայ հրդեհել: Լեզուն ալ կրակ է: Անիրաւութեան աշխարհ մըն է անիկա: Թէեւ պարզ մէկ անդամն է մարմնին, բայց ամբողջ մարդը կ'ապականէ, եւ գեհենի կրակով բռնկած՝ մեր ամբողջ կեանքը կրակով կը վառէ: Բոլոր տեսակի գազանները, թռչունները, սողունները եւ ծովային կենդանիները նուաճուած են մարդուն կողմէ եւ կը հնազանդին անոր: Բայց ո՛չ ոք կրնայ հնազանդեցնել մարդկային լեզուն որ չար է, անզսպելի եւ մահացու թոյնով լեցուն: Անով կ'օրհնենք մեր Տէրը եւ Հայրն Աստուած, եւ դարձեալ անով կ'անիծենք մարդիկը որոնք Աստուծոյ նմանութեամբը ստեղծուած են: Այսինքն՝ նոյն բերանէն կ'ելլեն թէ՛ օրհնութիւնը եւ թէ՛ անէծքը: Ասիկա ճիշդ չէ սակայն, եղբայրներս: Միթէ աղբիւր մը միեւնոյն ակէն քաղցր եւ դառն ջուր կը բղխէ՞: Կարելի բա՞ն է, եղբայրներս, որ թղենին

ճիթապտուղ տայ կամ որթատունկը՝ թուզ: Նմանապէս կարելի է ն որ աղուտ հողէն քաղցր ջուր բղխի:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ  
(1.1-17)**

Աշխարհի ստեղծագործութենէն առաջ գոյութիւն ունէր Բանը, այսինքն Որդին: Բանը Աստուծոյ հետ էր եւ Բանը Աստուած էր: Անիկա սկիզբէն Աստուծոյ հետ էր: Անով էր որ Աստուած ամէն ինչ ստեղծեց. առանց անոր ոչ մէկ բան ստեղծեց: Կեանքը Անով սկիզբ առաւ. եւ կեանքը մարդոց համար լոյսն է՝ որ խաւարին մէջ կը փայլի. եւ խաւարը չկրցաւ Անոր յաղթել:

Յովհաննէս, որ Աստուծոյ կողմէ զրկուած մարդ մըն էր, եկաւ Լոյսին համար վկայութիւն տալու, որպէսզի ամէն մարդ Անոր անունին հաւատայ: Ինք Լոյսը չէր, այլ՝ Լոյսին համար վկայ մը: Բա՛նն էր ճշմարիտ Լոյսը, որ աշխարհ գալով կը լուսաւորէ ամբողջ մարդկութիւնը: Աշխարհի մէջ էր Ան, աշխարհը Իրմով ստեղծուեցաւ, սակայն աշխարհը զԱյն չճանչցաւ: Իր իսկ ստեղծած աշխարհը եկաւ, բայց մարդիկ զԻնք չընդունեցին: Իսկ զԻնք ընդունողներուն եւ Իրեն հաւատացողներուն՝ իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու. ո՛չ արեան ճամբով եւ ո՛չ մարմնի կամ մարդկային կամքով, այլ Աստուծոյ ծնելով:

Եւ Բանը մարմին եղաւ եւ մեր միջեւ բնակեցաւ՝ շնորհքով եւ ճշմարտութեամբ լեցուն: Մենք տեսանք Անոր փառքը, փառքը Աստուծոյ միածին Որդիին:

Յովհաննէս Անոր մասին վկայեց, յայտարարելով. «Ասիկա է Ան, որուն մասին կ'ըսէի. "Ան որ ինձմէ ետք պիտի գայ՝ ինձմէ մեծ է, որովհետեւ ինձմէ առաջ գոյութիւն ունէր"»: Իր լիառատ շնորհքէն մենք շարունակ շնորհք ստացանք, որովհետեւ Օրէնքը Մովսէսի միջոցաւ տրուեցաւ, մինչ շնորհքն ու ճշմարտութիւնը՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

**ՀԱՐԱԿԱՆ ՆՈՐ ԿԻՐԱԿԻԻ\***

(Ներսէս Լամբրոնացի, 12-րդ դար)

*Առ Աստուած նորոգեալ կղզիներ՝  
եկեղեցիներ ոչ-հրեայ ազգերու,  
լեռներու գլուխներէն*

*բարձրագոյ փառաւորեցէք զԱստուած,  
եւ մեռելներէն յարուցեալին յաղթանակը պատմեցէք:*

*Ո՛վ երկնաւոր փեսային հարսնացած  
Աստուծոյ եկեղեցի,  
ոսկեկրակ հանդերձներու պաճուճմամբ  
ներքնապէ՛ս զարդարուէ.*

*քանզի ահա քեզի կու գայ Փառաց Թագաւորը՝ Քրիստոս:*

*Քրիստոս Թագաւորով ուրախ՝ Սիրովնի որդիներ,  
ցնծութեամբ տօնեցէք մեղքի հնութենէն նորոգուած  
մեր հոգիներուն նաւակատիքը.  
հրեշտակներուն հետ գովենք Փառաց Թագաւոր Քրիստոսը:*

*Սքանչելի է տնօրինութեանդ խորհուրդը, Քրիստոս,  
որ Հօրմէ իջար ի սէր եկեղեցի-հարսին, զոր ընտրեցիր.  
Ան քեզ կը փառաբանէ, Ո՛վ անմահ Թագաւոր:*

*Ո՛վ յարուցեալ, եկեղեցիիդ հիմերուն երեւցար,  
որոնցմէ թովմաս*

*կը հրաժարէր հաւատալ այն ականատեսներուն:  
Իրեն՝ փափաքողին՝ մարմնիդ վէրքերը ցոյց տուիր:*

*Թովմաս սարսուժով կը շօշափէր  
տէգին եւ գամերուն խոցուածքը,  
եւ բարձրաձայն՝ Տէր եւ Աստուած կը դաւանէր  
յարուցեալը:*

*Այդ առիթով է, որ երանիին արժանացանք՝  
առանց տեսնելու հաւատացողներս:*

\* Այս շարականը յօրինուած է «Ներսէս» անուան տառերով: Բնագրին յաջորդական համարները կը սկսին հետեւեալ բառերով. «Նորոգեալ», «Երկնաւոր», «Րախացեալ», «Սփանչելի», «Էրեւցար» եւ «Սարսուժ»:

**ՅԻՆՈՒՔԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ  
(ԾՐԱԿԱՆ ԲՃԱՏՐՈՒԹԻԱՆԵՐ - ԹԻՒ 9)**

**Թ.**

**ՆՈՐ ԿԻՐԱԿԻ ԿԱՄ ԿՐԿՆԱԶԱՏԻԿ**

- Հարցումներ.*
- 1.- Ինչո՞ւ Ս. Զատկուայ յաջորդ Կիրակին «Նոր Կիրակի» կամ «Կրկնագատիկ» կը կոչուի: Ի՞նչ կը նշանակէ «Նոր Կիրակի» եւ ի՞նչ կը նշանակէ «Կրկնագատիկ»:
  - 2.- Կը յիշատակէ՞ դէպք մը կամ յիշատակութիւն մը կ'ընէ՞:
  - 3.- Ի՞նչ կ'ըսեն Ս. Գրային ընթերցումները:

**Պատասխաններ.**

1.- Նախ, ի՞նչ կը նշանակէ «Նոր Կիրակի»: Արդեօ՞՞ք «Հին Կիրակի» կամ «Հին Կիրակիներ» ալ կան: «Կիրակի» բառը յունական ծագում ունի. գիւրիագէ՛ = Տիրոջ օրը: Հին Ուխտին մէջ Տիրոջ օրը Շաբաթն էր. Տե՛ս Ելփ՝ 20.8-10, 11. Բ. Օրէնք՝ 5.12-15:

Ինչպէս Յիսուս, իր աշակերտներն ալ Շաբաթը կը պահէին: Այստեղ կարելոր է յիշել, թէ Յիսուսի համար Շաբաթը պահելու յանձնարարութիւնը օրէնքին ստրկական ենթարկում մը չէր. ըստ իրեն, Շաբաթ օրը մարդուն համար էր, եւ ոչ թէ մարդը՝ Շաբաթ օրուան համար (տե՛ս Մկ 2.23-27, Մտ 12.1-8, Ղկ 6.1-5): Յիսուսի հետեւորդները՝ իրենց Վարդապետին «առ Հայր» մեկնելէն ետք, շարունակեցին Շաբաթը պահել: Անոնք մասնաճիւղային օրը կը հաւատէին հացը բեկանելու համար, այսինքն՝ յիշելու Տիրոջ Վերջին Ընթրիքը, որ խորհրդանշանն է անոր գոհագործական իմնընծայումին (տե՛ս Առաքելականութիւն Գործերը 20.7-6): Այն օրէն երբ Քրիստոսի աւետարանը սկսաւ տարածուիլ հետեւորդներուն մէջ, եւ անոնք պարտաւոր չէին Օրէնքին ենթակայ ըլլալու, ապա հետգիտէ Քրիստոսի յարուստան օրը դարձաւ Տիրոջ օրը («Գիւրիագէ՛»): Արդէն երկրորդ դարուն ընդհանրացած էր շաբթուան առաջին օրը՝

Կիրակին սուրբ պահելու անդուրժանքները:

Արդ, «Կիրակի» կը նշանակէ «Տիրոջ օրը», այլ բացատրութեամբ մը՝ Քրիստոսի պաշտամունքին օրը: (Պէտք է արձանագրել նաեւ, որ «Տիրոջ օրը» հասկացողութիւնը քրիստոնեայ սկզբնական համայնքներուն համար անմիջականօրէն ունէր վախճանաբանական նշանակութիւն մըն ալ. անիկա ակնկալութիւն էր Դատաստանի օրուան, երբ «Նոր երկինք»ը եւ «Նոր երկիր»ը պիտի հաստատուէին. իւրաքանչիւր Կիրակի, ուրեմն, Նոր երկինքին եւ Նոր երկրիին կը վերաբերի):

Իսկ ինչո՞ւ «նոր» որակականը: Ի՞նչ է նորը: Նկատի ունենալով՝ որ Նոր Կիրակին Քրիստոսի յարութեան կը վերաբերի գլխաւորաբար, արդար կ'ըլլայ սա հարցումը. Ի՞նչ է Նոր Կտակարանին մէջ «նոր» ի հասկացողութիւնը:

Նոր Կտակարանին մէջ ամէն ինչ որ Յիսուսի փրկագործութեան առնչուած կամ անոր լոյսով թափանցուած է՝ «նոր» որակուած է. այսպէս՝ ուխտը՝ նոր ուխտ, ստեղծագործութիւնը՝ նոր ստեղծագործութիւն, մարդը՝ նոր մարդ, եւ այլն:

Ըստ ՆԿ-ին, «նոր» Քրիստոսով փրկութիւնը կը պատմէ: Եւ քանի որ որ Նոր Կիրակին անմիջականօրէն կապուած է Զատնուան, այս անիկա մեզի կը յայտնէ Քրիստոսի յարութեամբ մեր նորոգուիլը, հետեւաբար ամբողջ ստեղծագործութեան նորոգուիլը. ինչպէս որ մարդուն անկումով՝ ստեղծագործութիւնը հինցաւ, նոյնպէս ալ մարդուն վերականգնումով՝ ստեղծագործութիւնը նորոգուեցաւ: Պետոս առաքեալ գրած է. «Օրհնեալ է Աստուած, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Հայրը, որ իր առատ ողորմութեամբ մեզ վերստին ծնաւ, որպէսզի Յիսուս Քրիստոսի մեռելներէն յարութիւն առնելովը՝ ունենանք կենդանի (=պրող) յայտը՝ թէ պիտի ժառանգենք անեղծ, անարատ եւ անթաւառ կեանքը, որ երկինքի մէջ պահուած է մեզի համար» (Ա. Պտ 1.3-4): Մեր վերստին կամ նորէն կամ նոր ծնունդը սերտօրէն կապուած է Քրիստոսի մեռելներէ յարութեան: Գլխաւորաբար ասիկա է, որ մեզի կը թելադրէ «Նոր Կիրակի» անունը:

Բոլոր Կիրակիներն ալ ի խորութեան նոր են անշուշտ, որովհետեւ բոլորն ալ Յարութեան հաւատքին վրայ խարսխուած են: Պարզ է, որ Նոր Կիրակիին միայն «նոր» որակուիլը ծիսական արժէք ունի, ծիսական նշանակալից անուանում մըն է, եւ կ'ըսէ թէ՛ յետ զոջումի (Մեծ Պահէ) է, որ Քրիստոսի հաւատացողները արժանի կ'ըլլան նանչակալու անոր յարութեան գօրութիւնը:

Հարցումին երկրորդ բաժինը՝ թէ ինչո՞ւ «Կրկնագատիկ» ալ կը կոչուի: Օրմանեան արքեպիսկոպոս գրած է. «Ժողովրդական անուն մըն է, որ երբեմն կը տրուի Զատնի Ը. օրուան կամ Նոր Կիրակիին, սակայն բնաւ եկեղեցական նշանակութիւն չունի»: Շնորհիք արքեպիսկոպոս այս անունին ծագումը տեսած է Զատնական ուրախութիւններու կրկնութեան, ինչպէս նաեւ «Զատնի տիրող հոգեւոր ու ընկերային մթնոլորտ» ինչ մէջ:

Օրմանեան սրբազանի հաստատումին վրայ կարելի է մտածել՝ թէ «Կրկնագատիկ» անուն «Զատնիկ» բառը՝ պարզապէս ընկալուած է որպէս հոմանիշ «Յարութիւն» ինչ: Եւ նկատի ունենալով, որ Նոր Կիրակին կը յիշատակէ Յիսուսի կրկին անգամ «երեւում»ը փակ տան մէջ հաւաքուած իր աշակերտներուն (նախ տասին, այս Թովմասի անոնց հետ եղած ատենը), ուրեմն, «Կրկնագատիկ» անուամբ մեզի կը պատմուի Քրիստոսի

յարութեան կրկնակի յայտնութիւնը իր աշակերտներուն:

2.- Երկրորդ հարցումին արդէն պատասխանեցի: Բարի կ'ըլլայ եւ պատասխան աւելի շօշափելի նկարագիր կ'առնէ՝ եթէ կարդացուի Յովհաննէսի աւետարանին 20.19-29-ը: Ուշագրաւ է եւ նաեւ հետաքրքրական, որ աշակերտներուն կրկին անգամ երեւնալու դէպքը չէ պատմուած Ս. Գրային ընթերցումներուն մէջ:

3.- Ս. Գրային ընթերցումներն են. Առաքեալներուն Գործերը գիրքէն՝ 5.34-6.7-ը, Յակոբոս Առաքեալի Նամակէն՝ 3.1-12-ը, եւ Յովհաննէսի աւետարանէն՝ 1.1-17-ը:

Առաջին հատուածը մեզի կը ներկայացնէ ուրբի Գամաղիէլի ճառը, եւ եկեղեցւոյ առաջին սարկաւազներուն ընտրութիւնը եւ ձեռնադրութիւնը:

Գամաղիէլի ճառին գլխաւոր միտքն է, թէ ինչ խորհուրդ եւ գործ որ մարդոցմէ է՝ կը խափանուի, իսկ ինչ խորհուրդ եւ գործ որ Աստուծմէ է՝ մարդիկ չեն կրնար խափանել, իսկ եթէ փորձեն խափանել՝ թերեւս այդ ձեւով Աստուծոյ դէմ պայքարած կ'ըլլան: Ռաբբին այս միտքը կը յայտնէր՝ զգուշացնելու համար իր փարիսեցի եղբայրները, որոնք Յիսուսի հետեւորդներուն դէմ կատաղի հալածանք շղթայագերծած էին:

Այս հատուածին երկրորդ բաժինը կը տեղեկացնէ, թէ Քրիստոսի մասին փարոգութիւնը անդադար կը կատարուէր եւ Քրիստոսի հետեւորդներուն թիւը կը շատնար: Եւ ասա այստեղ՝ եկեղեցւոյ առաքելութեան մէկ այլ ծիրին կենսականութիւնը ցոյց կը տրուի. անիկա ընկերային ծառայութեան կազմակերպումն է, որ իրեն յատուկ սպասուրները կամ նուիրեալները կ'նուրէ: Եկեղեցւոյ առաքելութեան մէջ, միայն Քրիստոսի մասին փարոգելը բաւարար չէ, անոր առընթեր այլ շատ կարեւոր պէտք մըն է ընկերային ծառայութիւնը:

Յակոբոս առաքեալի նամակէն փառաբան Քրիստոսի մասին փարոգողներէն կը պահանջէ սեփական «խօսքերը կոչել», չ'ըլլալ անսանձ ձիներու պէս, որովհետեւ լեզուն «անիրաւութեան աշխարհ մըն է», «մարդը կ'ապականէ, եւ գեեեհի կրակով բռնկած՝ մեր ամբողջ կեանքը կրակով կը վառէ»:

Յովհաննէսի աւետարանէն փառաբանը նախագոյ աստուածային Բանին մասին է, թէ ան՝ Աստուծոյ հետ էր եւ Աստուած էր: Անով է, որ Աստուած ամէն ինչ ստեղծեց, կեանքը անով սկիզբ առաւ: Թէ Բանն Աստուած «ձշմարիտ Լոյս»ն է, եւ անոնք որ զինք կ'ընդունին, իրեն կը հաւատան, արժանի կ'ըլլան «Աստուծոյ որդիներ ըլլալու», սակայն ո՛չ թէ արեան ճամբով եւ ո՛չ ալ մարմնի ճամբով, այլ «Աստուծմէ ծնելով»: Մարմնացեալ Բանն է Յիսուս Քրիստոս, որուն միջոցով՝ հաւատացողներուն տրուեցաւ եւ կը տրուի «շնորհքն ու նշմարտութիւնը»:

Բայց ինչո՞ւ իրարու կը կապուին երեք հատուածները: Անոնց առանցֆային գիծը, ըստ իս, Քրիստոսի մասին փարոգութիւնն է: Եւ այդ թեմայով է, որ հատուածները իրարու կը միանան: Իսկ իւրաքանչիւրին մէջ տարբեր նիւթերու ներկայութիւնը եւ տարբեր շեշտադրումները (Ընկերային ծառայութիւն, լեզուի բարոյագիտութիւն, Քրիստոսաբանութիւն)՝ Քրիստոսի մասին փարոգութեան անհրաժեշտ տարբերու շրջագիծ մը ցոյց կու տան:

Հովհ.  
ԳԲ